ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՎԱՐՊԵՏԸ. ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՏԴ 929
DOI: 10.56246/18294480-2023.15-01

ՂԱՋՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Էլփոստ՝ h.ghajoyan@gsu.am

Հոդվածը նվիրված է Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Հակոբյանի կողմից մարդկային ներուժի և հնարավորությունների բացահայտմանը, դրանք համապատասխան նպատակներին ուղղորդելուն:

Ուշադրություն է դարձվել հատկապես այն կարողունակությունների վերհանմանը, որոնք առավել դրսևորվեցին Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական և contr վարչակառավարչական անձնակազմը ձևավորելիս: Նրա նպատակն էր նաև տարածաշրջանի ողջ մտավոր ներուժի բացահայտումը:

Հոդվածի հիմքում Հրանտ Հակոբյանի հեղինակած «Էջեր Գավառի պետական համալսարանի պատմությունից» գործն է, ինչպես նաև նրա հետ աշխատած տարիներին հեղինակի ստացած տպավորությունները, հուշերը: Տողերի հեղինակը անձամբ զգացել է մարդկանց ներուժը բացահայտելու նպատակով Հրանտ Հակոբյանի գործադրած ջանքն ու հոգատարությունը:

Հոդվածում արվել է այն հետևությունը, որ այլոց ներուժը բացահայտելու համար նախ և առաջ պետք է դրա ցանկությունը ունենալ, այնուհետև կարողանալ արժևորել անձի ներուժը ոչ միայն անձնական, այլև հանրային օգտակարության տեսանկյունից՝ ելնելով այն սկզբունքից, որ անձի ներուժը, կարողությունները միայն նրա սեփականությունը չեն, այլ ազգային հարստություն է:

Իր այդ հատկությունների շնորհիվ Հրանտ Հակոբյանը կարճ ժամանակահատվածում իր շուրջը համախմբեց նվիրյալների համերաշխ կոլեկտիվ, որը դարձավ համալսարանի կայացման հենասյունը:

Բանալի բառեր՝ *առաքելություն, ներուժ, կարողություն, ներշնչանք, նախախնամություն:*

Երեսուն տարի առաջ՝ 1993 թվականի հոկտեմբերի 16-ին, Գավառի պետական համալսարանի հիմնադրման առիթով կազմակերպված բացման հանդիսավոր արարողության ժամանակ հնչեցին բազմաթիվ շնորհավորա-

կան խոսքեր, որոնք՝ որպես վավերագրեր, խնամքով շարադրված են Հրանտ Հակոբյանի հեղինակած «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գրքում: Մեջբերենք դրանցից մեկը. «Մենք հավատացած ենք, որ դուք ձեր ողջ եռանդը, մտավոր ուժերն ու կարողությունները, կենսափիլիսոփայությունը կներդնեք ձեր կողմից հիմնադրված ուսումնական հաստատության գործունեության փայլուն կազմակերպմանն ու իրականացմանը»[1]:

Մարդն աշխարհ է գալիս որոշակի առաքելությամբ և կոչումով: Երբ ընթերցում ես համալսարանի պատմությանը նվիրված նրա գիրքը, պարզ է դառնում, որ Հրանտ Հակոբյանի պարագայում այդ առաքելությունն ու կոչումը դրսևորվել են դեռևս պատանի հասակում:

Աշխատությունն ընթերցողը Հակոբյանի կյանքի փորձի օրինակով համոզվում է, որ ցանկացած ձեռնարկ բարեհաջող ավարտին հասցնելու համար մարդն առաջին հերթին հույսը իր վրա պետք է դնի, ինքն իրեն հավատա, ունենա վստահություն իր ուժերի հանդեպ: Ինքնավստահություն չունեցող մարդը չի կարող մյուսների ներուժը բացահայտել, առավել ևս այն որևէ նպատակի ուղղորդել: Իսկ Հակոբյանի համար ելակետային նշանակություն ուներ այն, որ առաջին հերթին ինքդ քո նկատմամբ ունեցած վստահությամբ է պայմանավորվում այլոց հանդեպ տածած վստահությունը: Նախախնամության ուժով նա իր առաքելությունն էր համարում նաև տարբեր ժամանակահատվածներում իր առջև դրված նպատակների իրականացմանը հաղորդ դարձնել այլ անձանց՝ ապահովելով նրանց ներուժի բացահայտումն ու ուղղորդումը, որն առավել ակնառու դրսևորվեց Գավառի պետական համալսարանի հիմնադրման ժամանակ: Այս առումով համամիտ ենք Գյոթեի հետևյալ մտքի հետ, որ յուրաքանչյուր մարդ «…ունի իր որոշակի միսիան, որի կատարման համար նա կյանքի է կոչված: Կատարեց այդ միսիան, նշանակում է, այլևս հարկ չկա, որ նա երկրային նույն տեսքով մնա, և նախախնամությունը նրան մի նոր նպատակի համար է օգտագործում»[2]: Գյոթեի խոսքերին համահունչ են դստեր դիտարկումը հոր մասին. «Բայց մարդն աշխարհ է գալիս որոշակի կոչումը նախախնամությամբ ուսած, իսկ Հրանտի կոչումը փիլիսոփայական գիտության բարդ, հետաքրքիր, խրթին ու իմաս-

[1] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 82:
[2] Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 324:

տուն աշխարհին զինվորագրվելն էր: Այդ աշխարհը հմայեց, գայթակղեց ու տարավ նրան,...»[3]: Հակոբյանը բնությունից վերապահված մի այլ առաքելություն ևս ուներ, որը գիտակցեց տակավին երիտասարդ հասակում, և դրա մասին ինքը խոստովանում է այսպես. «Հետագայում՝ ասպիրանտուրայում, թե երկրորդ ֆակուլտետում սովորելու տարիներին, ինձ հանգիստ չէր տալիս մեր շրջկենտրոնում բուհ բացելու հարցը»[4]: Վաղուց ունեցած այդ երազանքը նորովի արժևորվեց 1990-ական թվականների սկզբին, երբ ձեռնամուխ եղավ Գավառ քաղաքում պետական համալսարանի հիմնադրմանը: Ստեղծված իրադրությունում պատմական հնարավորությունը բաց չթողնելու նկատառումներով նախաձեռնեց մի գործ, որն իրենից առաջ ոչ ոք չէր փորձել, անգամ այդ մասին ակնարկ չէր արվել: Այդ գործը դարերի համար է, որը կրթամշակութային առումով արդեն իսկ դարձել է տարածաշրջանի համար անգնահատելի արժեք, հայոց արդի պատմության էջերում իր ուրույն տեղը ունեցող երևույթներից մեկը: Համալսարանի հիմնումը Հրանտ և Հրանուշ Հակոբյանները համարում էին իրենց կյանքի գործը՝ ներդնելով բոլոր հնարավորություններն ու կարողությունները, առաջնորդվելով հայրենասիրական ներքին մղումով, անբացատրելի մի ուժով: Իսկ թե ինչ նշանակություն ուներ համալսարանն անձամբ Հակոբյանի համար, ինչպիսի տառապանք ու բերկրանք է ապրել, կարծում ենք միայն դստեր բնորոշումը բավական է դրա կարևորությունը հասկանալու համար՝ «Եվ ծնվեց, զորացավ Գավառի պետական համալսարանը՝ որպես Հրանտ Հակոբյանի հինգերորդ՝ սիրելի զավակ»[5]:

Ազգային և տարածաշրջանային դիմագիծը պահպանելու նկատառումներով Հակոբյանը կարևորում էր երկու գործոն. հոգևոր ոլորտում հավատքը, մտավոր ոլորտում՝ կրթությունը: Հոգևոր ոլորտում այդ գործն արդեն արված էր: 1902-1905 թվականների ընթացքում Հայրապետ Խաչատրյանի՝ Կոլոտ Հայրապետի նախաձեռնությամբ կառուցվում է Սուրբ Աստվածածին հրաշալի եկեղեցին: Սրանով տեղաբնակ հայ մարդը փրկվում է հոգևոր ամլացումից: Եկեղեցու կառուցումից իննսուն տարի անց Հրանտ Հակոբյանին բաժին հասավ տարածաշրջանը մտավոր առումով հզորացնելու առաքելությունը: Այդ գաղափարը նրա մոտ հասունացել էր ներքուստ, չնայած մինչ

---

[3] Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ, Երևան, 2014, էջ 15:

[4] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003, էջ 30:

[5] Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ, Երևան, 2014, էջ 17:

համալսարանի հիմնադրումը նախաձեռնելը, նա նվիրվել էր երիտասարդության կրթության գործին: Եվ ինչպես նկատել է Ստեֆան Ցվայգը, «Այն, ինչ սովորաբար հոսում է համաչափ, միաժամանակ կամ հետևողաբար, խտանում է այդ ակնթարթում, և դա կարգավորում ու կանխորոշում է ամեն ինչ …հարյուրավոր սերունդների բախտը, ուղղություն է տալիս առանձին մարդկանց»[6]:

Համալսարանի հիմնադրումը Հակոբյանի համար նախկինում ձեռնարկած գործերից զգալիորեն տարբեր էր, միաձուլվել էին ներուժն ու ներշնչանքը, սա կարելի է բնորոշել ներուժի հորդացող, ժայթքող դրսևորում: Որքանով այդ օրերին նրա կողքին էի, ուստի իրավունք եմ վերապահում ինձ՝ ասելու, որ համալսարան հիմնադրելու գաղափարի իրականացումը համարվելու է հենց Հրանտ Խաչատուրի Հակոբյանի աստեղային ժամը: Հակոբյանը դրանով իսկ կամովին ստանձնեց տարածաշրջանի ողջ մտավոր կարողությունների բացահայտման ու մեկտեղման հոգևոր ու մտավոր մշակի պատվաբեր, բայց ծանր պարտականությունը: Նա համոզված էր, որ մտքի կորուստը վերականգնելը տևական ջանքեր ու ժամանակ է պահանջում, ուստի այն չպետք է թույլ տալ: Նա սեփական և այլոց փորձից լավ գիտեր՝ տիրոջ իրավունքն ունենալու համար նախ պետք է լինես այդ գործի մշակն ու ծառան: Գործնականում, եթե միայն տեր ես, աշխարհին, մարդկանց, երևույթներին նայում ես այլ տեսանկյունից, եթե նախ ծառա ու մշակ, հետո նոր տեր՝ մի այլ դիտակետից: Այլոց ներուժի բացահայտումը մշակի, ծառայի պարտականությունների ու պարտքի ոլորտն է, ներուժն ուղղորդելը՝ տիրոջ իրավունքը: Նրա մոտ տերն ու մշակը այնպես էին զուգորդված ու ներդաշնակ, որ սահմանազատելու կարիքն էլ չէր զգացվում: Դրա համար էլ որտեղ պետք էր իշխան էր ու տեր, որտեղ անհրաժեշտ էր՝ համեստ մշակ ու ծառա: Տիրոջ ու ծառայի հակասությունը դեռևս մանուկ հասակից նրան խորթ էր, անընդունելի: Դա էր նրա կենսափիլիսոփայությունը:

Տարիներ հետո նա ճշգրտորեն բանաձևում է հետևյալը. «Սակայն միշտ չէ, որ մարդու ճակատագիրը որոշվում է իր իսկ ցանկությամբ, ամեն մի անհրաժեշտի կողքին գտնվում է պատահականը, որն անխուսափելիորեն ներգործում է մարդու հետագա գործունեության վրա…»[7]: Այո՛, կյանքը օրինաչափությունների և պատահականությունների շղթա է:

---

[6] Ցվայգ Ստ., Մարդկության աստեղային ժամերը, Երևան, 1986, էջ 5:

[7] Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003,էջ 17:

Երիտասարդ տարիքում նա հասկացավ, որ կոչված չէ շարունակելու ճանաչված վարպետ հոր՝ հյուսնի աշխատանքը և իր ուժին ու գիտելիքներին, իր հզոր կամքին ու վճռականությանն ապավինելով՝ հարթեց իր ճամփան: Այլոց ներուժը բացահայտել ցանկացող մարդուն հատուկ է մյուսներին դեպի իրեն ձգող էներգիան: Այս տեսանկյունից Հակոբյանը զարմանալիորեն դեպի իրեն ձգող կենսադաշտ ուներ, որ շատ շատերն են խոստովանել: Նրան հանդիպած յուրաքանչյուր անձ, առավել ևս տողերիս հեղինակը երախտագիտության մեծագույն զգացումով էր լցվում Հակոբյանի հանդեպ՝ հոգատարության և ուշադրության արժանանալու համար: Ինձ և բոլոր նրանց համար, որոնց հետ առնչվել է Հակոբյանը, անվերապահորեն ընդունելի է աղերսներ տեսնել Էքերմանի հետևյալ դիտարկման հետ. «Այսօր առաջին անգամ եղա Գյոթեի մոտ: Նրա ընդունելությունն անչափ սրտագին էր, իսկ ինձ վրա նրա անձնավորության թողած տպավորությունն այնպիսին, որ այդ օրը ես համարում եմ ամենաերջանիկն իմ կյանքում»[8]:

Անձամբ ունեցել եմ այնպիսի զգացողություն, իսկ այդ մասին լսել եմ շատերից, որ Հակոբյանի հետ հաղորդակցման, շփման շնորհիվ կարծես միանգամից մի քանի տարով հասունանում և առավել փորձառու ես դառնում: Դա մի յուրահատուկ ջերմություն էր, որ ի զորու էր ներուժդ փոթորկելու, եռման աստիճանի հասցնելու: Շնորհիվ դրա՝ այն նույն զգացումն էինք ապրում, որ Էքերմանն է նկարագրել. -«Հոգուս խորքում խոստովանում էի, որ իսկական երջանկություն է իր գործի իսկական վարպետի հետ հանդիպելը: Նման հանդիպումից ստացած օգուտն անգնահատելի է»[9]:

Այդ ամենին նա վարպետորեն ծառայեցնում էր իր իսկ կողմից դասավանդվող գիտությունը՝ փիլիսոփայությունը: Հակոբյանի պարագայում փիլիսոփայությունը միայն լսարանային կամ աշխատասենյակի առարկա չէր, տեսական եզրույթներ պարունակող գիտություն չէր, այն միտված էր կոնկրետ մարդուն ու հասարակությանը ճանաչելուն: Դրա առանցքում մարդու և հասարակության ճակատագիրն էր, աշխարհայացքի ձևավորումը, կյանքի իմաստի բացահայտումը: Այն գործնականորեն կիրառելի էր, քանզի կենսափիլիսոփայություն էր: Մեր նպատակն է պարզաբանել, թե ինչպես էր Հակոբյանին հաջողվում բացահայտելու իր տեսադաշտում կամ գործունեության ոլորտում գտնվող անձանց հնարավորություններն ու ներուժը: Հանգել ենք

---

[8] Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 7:
[9] Նույն տեղում, էջ 19:

այն հետևության, որ նախ պետք է դրա ցանկությունն ունենալ, այնուհետև կամենալ, արժևորել մարդու հնարավորությունները ոչ միայն զուտ անձնական, այլև հանրության տեսանկյունից: Ներուժի բացահայտման կարևորությունը, զուգակցված ազգային, պետական մտածելակերպին, Հակոբյանին հանգեցրել էր այն հետևության, որ անձի ունակությունը, ներուժը միայն տվյալ անձին չի պատկանում, միայն նրա սեփականությունը չէ, այն պատկանում է ազգին, ժողովրդին, տարածաշրջանին, համայնքին ըստ չափի ու կարևորության, ուստի այն ազգային հարստություն է՝ իր դրսևորումներով ու կարևորությամբ: Հենց այս ոգով ու մտայնությամբ նա ձեռնամուխ եղավ ԳՊՀ հիմնադրմանը, որն առավել նպաստավոր ու լայն հնարավորություններ էր ստեղծելու մեկտեղելու կրթության ու գիտության ոլորտում տարածաշրջանում եղած ներուժը՝ այն զուգակցելով բոլոր սերունդների, այդ թվում՝ հանրապետության այլ բուհերում դասավանդող և արդեն իրենց ներուժը դրսևորած անձանց գիտական, կրթական, սոցիալական փորձի փոխանցման ու զուգորդման հետ: Այս մոտեցման շնորհիվ Հակոբյանն ուներ մի սկզբունք, որով հաղթահարվում էր ներկայի և անցյալի, ավագ և երիտասարդ սերնդի միջև ընկած ժամանակատարածքային արգելքը: Սա դեռ բոլորը չէ. անձն իր մեջ ևս պետք է կարողանա հաղթահարել ժամանակատարածային այդ երկվությունը, մի բան, որ Հակոբյանի պարագայում այնքան սահուն էր ստացվում, որ հիացմունք ու զարմանք էր հարուցում: Հակոբյանի հետ տարբեր հանգամանքներում շփվելիս զգում էիր, որ ներկա պահին նրա մեջ այսօրվա մարդու հետ երկխոսության մեջ է երեկվա մարդը: Այդ ինքն անում էր կանխամտածված բացահայտ ու անթաքույց, ավելին՝ ուրվագծվում էր վաղվա մարդը: Քանզի նրա մոտ երկվությունը երեկվա ու այսօրվա մարդու միջև գրեթե բացակայում էր, դրա համար էլ նա միշտ հավասարակշիռ էր ու կանխատեսելի բոլոր պարագաներում ու հանգամանքներում: Նա իր բարձրաձայն մտորումներով այդ զգացումը փոխանցում էր իր շրջապատում գտնվող մարդկանց: Դա հանգեցնում էր նրան, որ ամենքիս մեջ էլ սկսում էին կռվել այսօրվա մարդը և երեկվա անձը, ակամայից սկսում էիր կա՛մ սիրել քեզ, կա՛մ հիասթափվել քեզանից: Սա հոգեբանական մի իրավիճակ էր, երբ ստիպում էր նախ ինքդ զգայիր, գնահատեիր՝ ներուժդ նպատակայի՞ն ես օգտագործել, թե՞ պարզապես վատնել ես: Մինչ դու խարխափում էիր այսօրվա ու երեկվա միջև, նա արդեն իսկ քեզ տեսնում էր վաղվա օրվա մեջ: Ի՜նչ հմտությամբ էր տեսնում, զգում, որ զարմանք էր հարուցում: Քո մեջ տեսնում ու բացահայտում էր այն, ինչը դու անգամ երազել չէիր կարող:

Ակամա դու համակվում էիր այն զգացումով, որ Հակոբյանից սպասելիք ունես՝ պայմանով, որ արդարացնես նրա հույսերը: Իսկ արդեն այդ անելու համար մեծ ջանք ու կամք էր պետք, որին էլ նա հետևում էր: Ակնկալիքը գնահատելու հարցում նա արդեն իսկ խստապահանջ էր ու հետևողական: Մանկությունից եկող ներքին ազատության գիտակցումը, որին հանդիպում ենք «Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից» գրքում, ներուժը բացահայտելու առաջին ազդակն էր: Հիշել մանկությունն ու պատանեկությունը, երբ դրա կարիքն առաջացել է, ավելին՝ հիշել նախկինում ճանաչածը, այն համադրել ներկայի հետ՝ էությունն ու երևութականը միմյանցից զատելու համար, որի շնորհիվ ակնհայտ կդառնա ինքնաճանաչման չափը. ահա թե ներուժի բացահայտման գործում ինչ կարևորություն ուներ այս ամենը Հակոբյանի համար: Այսպիսով, նա իր գործունեությամբ ու կեցվածքով ցույց էր տալիս, որ յուրաքանչյուր մարդ ինքն է ձևավորում իր անհատականությունը, բարձրացնում դրա արժեքը: Այլ բան է, թե ինքնաարժևորումը որքանով է համահունչ հասարակական արժևորմանն ու կարծիքին: Այդպիսի ներդաշնակություն, որը դրսևորվեց Հրանտ Հակոբյանի պարագայում, հազվադեպ է պատահում:

Զարմանալիորեն առաջին իսկ հայացքից նկատում էր իր մտածելակերպին հարիր և նույնատիպ արժեհամակարգ ունեցող մարդկանց որոշակի խմբերի և կոլեկտիվում այն ուղղորդում գործնական խնդիրների իրականացմանը: Կարևորում էր այս առումով հատկապես երկու ոլորտ՝ գիտության, որտեղ մարդկանց միավորում են գիտական հետաքրքրությունները, և կառավարման, որտեղ ընդհանուր էին սկզբունքներն ու աշխատաոճը: Գերագույն զգացողություն էր ունենում, երբ գտնում ու բացահայտում էր միաժամանակ իր սկզբունքներին, տեսլականին, հետաքրքրություններին համապատասխանող ներուժ ունեցող անձանց: Այդ էր պատճառը, որ կարճ ժամանակում իր շուրջ համախմբեց երեք հարյուր անձից բաղկացած համերաշխ կոլեկտիվ, որի հենասյուներն այսօր համալսարանում են: Չեմ վարանի ասելու, որ արժանի մարդ ու որակյալ մասնագետ գտնելու դեպքում ապրում էր այն բերկրանքը, ինչպիսին կապրեր գիտության ոլորտում հայտնագործություն կատարած գիտնականը: Այսպես համատեղությամբ քաղաքային խորհրդի գործկոմի կազմակերպական բաժնի վարիչ աշխատած տարիներին ինձ առաջադրեց որպես համալսարանի նախապատրաստական խմբերի ղեկավար, երկար տարիներ ընդունելության քննությունների հանձնաժողովի պատասխանատու քարտուղար, այնուհետև ֆակուլտետի դեկան,

գիտական նախասիրությունների ոլորտում հայ գրողների փիլիսոփայական հայացքները ուսումնասիրող և այդ ուղղությամբ ատենախոսություն պաշտպանող ու հետազոտող: Մարդուն ճանաչելու, բնութագրելու և գնահատելու առանձնակի շնորհով էր օժտված Հրանտ Հակոբյանը: Բերեմ թերևս իմ օրինակը:

«Ներուժ» հասկացության բովանդակությունը Հակոբյանի բառապաշարում հոմանիշ էր հետևյալ ճշմարտությանը՝ յուրաքանչյուրը կոչված է ու պարտավոր է կրելու իր հասանելիք բեռը, որը գրեթե միշտ էր գործածում և բոլորիս կողմից ընկալվում էր չափազանց պատկերավոր կերպով: Իր պարտքն էր համարում «բեռը կրելու» առումով մեթոդաբանական ուղղություն և ցուցումներ տալը: Կարևորում էր այն, թե յուրաքանչյուրը որքանով է իրեն ճանաչում և իր կարողությունները գնահատում, որքանով են դրանք համահունչ հասարակական կարծիքին: Դրա համար էլ դիտողություններ էր անում իրենց կարողությունները անհիմն գերագնահատողներին, որը հանգեցնում էր մեծամտության, օգնում իրենց կարողությունները լիարժեք չդրսևորողներին, հաղթահարելու թերարժեքության բարդույթը: Հակոբյանի համար հասարակության ամենամեծ հարստությունը մարդն է, արարող, կայացած, կայուն աշխարհայացք և համոզմունք ունեցող անձը: Համոզված էր, որ եթե հատկապես կրթության, գիտության և մշակույթի ոլորտում ներգրավված մարդու ներուժը չես բացահայտում, ուղղորդում, թողնում ես ինքնահոսի, այն դադարում է հարստություն լինելուց, փոշիանում է որպես արժեք: Այս պարագայում ներուժը մնում է չբացահայտված, այսինքն՝ մնում է թաքնված, չօգտագործված: Այդպիսի հարստություն փնտրողը, պեղողը, գտնողը իր գործի իսկական վարպետը լինելուց զատ պետք է առաջին հերթին լինի մարդասեր, ազգասեր, առավել ևս՝ սերնդասեր: Հասարակական այդ հարստության դարբնոցը կրթական համակարգն է՝ դպրոց-բուհ ճանապարհով: Այդ ճանապարհով է ընթացել Հակոբյանը ողջ կյանքում, ուստի այդ ճանապարհի յուրաքանչյուր հատվածը, դեռ ավելին, հատվածում հանգրվանածը, օգնող ու խոչընդոտող հանգամանքները մանրամասն գիտեր: Գնահատում էր յուրաքանչյուր սերնդի ներուժը ազգանպաստ գործում:

Հակոբյանի համար ներուժի բացահայտման ձև էր նաև խորհուրդներ տալը: Հիմնականում դա կիրառում էր այն դեպքում, երբ դիմացինն էր ցանկություն հայտնում կամ կարիքը զգում: Իսկ նրա խորհրդի կարիքը շատերն էին զգում: Նրա տված խորհուրդը նման չէր պարզ քարոզչության, երբեմն ոչ տեղին ու ժամանակին: Հակոբյանի պարագայում խորհուրդը գիտելիքի

հաղորդման հաջորդականություն էր, այն վերացական կամ հայեցողական չէր, այլ կյանքի փորձով շաղախված, փորձված ու իմաստնացած: Նրա խորհրդում միաձուլվում էին գիտելիքը, կենսափորձը, հավատը ամենալայն՝ փիլիսոփայական իմաստով: Խորհուրդ տալու առումով կան տարբեր մոտեցումներ, ուստի դա նկատի ունենալով՝ դրանցից մեկի հետ զուգահեռներ կանցկացնենք. «…ով ուրիշից խորհուրդ է հարցնում, դրանով նա դրսևորում է իր սահմանափակությունը, և ով խորհուրդ է տալիս՝ դրսևորում է իր հավակնոտությունը: Խորհուրդ կարելի է տալ միայն այնպիսի գործի համար, որին ինքդ մասնակցություն ունես»[10]: Նրա հետ շփված երջանիկ անձինքս անվերապահորեն համոզված ենք, որ մեջբերման առաջին պարբերության հետ Հակոբյանը համամիտ չէր լինի, քանզի երբեք չի ունեցել հավակնոտություն և խորհրդի կարիք զգացողին էլ չի դիտել ոչ ունակությունների և ոչ էլ գիտելիքների առումով սահմանափակ: Այդ անձինք կա՛մ ունեին փորձի պակաս, կա՛մ էլ պարզապես կարծիքների համեմատության, վերլուծության, համադրման կարիք: Երկրորդ պարբերության հետ միանգամայն համամիտ էր, քանզի ինքը գնում էր հենց այդ ճանապարհով: Եթե խորհուրդ էր տալիս, ապա այդ ոլորտում անպայման իր բաժին մասնակցությունն էր ունենում: Այդպես էր վարվում գիտական աշխատանքներ ղեկավարելիս և որպես կոլեկտիվի ղեկավար՝ կարևոր հանձնարարություններ տալիս: Հակոբյանի համար խորհուրդ տալը ամենապատասխանատու գործերից մեկն էր, քանի որ այն իրագործելու համար իրեն պատասխանատու էր զգում: Այս առումով տրված խորհրդով չէր սահմանափակվում, իր գործն ավարտած չէր համարում, այլ ուշադիր հետևում էր, թե տվյալ անձի վրա խորհուրդն ինչ ազդեցություն ունեցավ, և ինչպիսի քայլեր է կատարում կամ ջանքեր գործադրում այն իրագործելու համար: Հակոբյանը նպատակ ուներ խորհրդի միջոցով անձին դուրս բերելու խնդրահարույց կենսադաշտից, երկընտրանքային իրավիճակներից: Իր կեցվածքով ու պահվածքով հասկացնել էր տալիս, որ խորհուրդ տալու իրավունքը պատկանում է ավագ սերնդին: Դրա համար էլ ներուժը ուղղորդելու առումով նա ընտրում էր այն երիտասարդներին, ովքեր ականջալուր էին ավագների խոսքին: Այս առումով աղերսներ ենք տեսնում հակոբյանական փորձի, մտածելակերպի և հետևյալ դիտարկման միջև. -«Յուրաքանչյունին թվում է, թե ինքը բոլորից լավ գիտի իր անելիքը, և այդ պատճառով ոմանք կործանվում են, ոմանք էլ երկար մոլորու-

[10] Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 509:

թյունների մեջ խարխափում: Բայց չէ՞ որ հիմա այլևս մոլորվելու ժամանակ չկա, մենք՝ ծերերս հենց դրա համար ենք ապրում: Էլ ինչու՞ են եղել մեր որոնումներն ու մոլորությունները, եթե դուք՝ երիտասարդներդ, նորից ուզում եք նույն ճանապարհով քայլել»[11]: Ներուժը բացահայտելու նկատառումներով, անասելի վարպետությամբ էր անձի մոտ հաղթահարում անլիարժեքության բարդույթը, նրան իր ուժերի նկատմամբ հավատ ներշնչում, կարծես լրացուցիչ կենսաէներգիա էր հաղորդում, որ երբեմն զարմանք էր հարուցում: Դա կփաստեն նրա հետ շփված մարդիկ: Պրոֆեսոր Հակոբյանի պատկառելի ներկայությամբ ոչ ոք չէր կաշկանդվում, դեռ ավելին՝ վստահություն էին ձեռք բերում: Եվ այս ամենը այն դեպքում, երբ շատ շատերը՝ աշխատակիցներ, ուսանողներ, այլոց ներկայությամբ և՛ կաշկանդվում էին և՛ կորցնում ներքին ազատությունը: Գործընկերներին, մասնավորապես դասախոսներին խորհուրդ էր տալիս արհեստականորեն չստեղծել այնպիսի միջավայր, որում ուսանողները, գործընկերները ընկնեն անլիարժեքության բարդույթի մեջ: Այսպիսի իրավիճակներում մարդը կաշկանդվում է, իսկ եթե դրան էլ հավելում են մեկի գործած մեղքի համար մյուսին անհարկի և անտեղի կշտամբելը, ակնհայտորեն տանում են ներուժի մարման: Այսօր երեսուն տարվա հեռավորությունից, առաջացած տարիքից ու մեր ձեռք բերած փորձից ելնելով՝ նրա կատարած գործը նորովի արժևորման և հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտություն ենք զգում: Բոլոր այն անձանց, որոնց դասախոսել է, և նրանց, ում ընդգրկել է դասախոսական աշխատանքներում և դեպի գիտություն ճանապարհ հարթել, ստեղծել հնարավորություն կամ առաջարկել վարչական անձնակազմում աշխատելու, նրանք զգում են ու կրում հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի ներարկած վստահության երկարատև ազդեցությունը: Ավելորդ չեմ համարում վերը շարադրվածը փաստարկել մեկ օրինակով: 2005 թվականին կազմակերպեց տողերիս հեղինակի թեկնածուական ատենախոսության նախապաշտպանությունը ԳՊՀ-ում: Գիտական խորհրդի անդամներից բացի՝ հրավիրել էինք գրեթե ողջ անձնակազմին և բոլորն էլ մասնակցում էին քննարկմանը: Ինքն էր գիտական ղեկավարս: Դոկտորական ու թեկնածուական մի շարք ատենախոսությունների պաշտպանության ընթացքում նրան տեսել էի, բայց այդ օրն ուրիշ էր: Բազկաթոռին տիրականորեն բազմած՝ գոհունակության ժպիտն ամբողջ ընթացքում դեմքին էր, ուստի երբեմն-երբեմն հայացքս

[11] Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975, էջ 16:

գցում էի նրա վրա՝ վստահությունս չկորցնելու և առավել ոգևորված աշխատանքս ներկայացնելու համար: Սա ընդամենը բազմաթիվ դեպքերից մեկն է իր իսկ կողմից ներուժը բացահայտած անձի նկատմամբ ցուցաբերած վստահության և ստացվելիք տպավորությունից: Եվ դա դեռ բոլորը չէր: 2007 թվականին ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի 013 մասնագիտական խորհրդում պաշտպանությունից հետո համբուրեց ճակատս և ասաց. «Քանի՜-քանի՜ նման պաշտպանությունների եմ մասնակցել, այնուհանդերձ այս մեկը ինձ համար ուրիշ էր»: Դժվարանում եմ ասել, միգուցե այլ նկատառումներով՝ դարձյալ ոգևորելով, ներուժս մինչև վերջ բացահայտելու մտադրությամբ, թե իսկապես ապրումների տպավորությամբ այդ ասաց: Հուզված էր, աչքերում ուրախություն ու փայլ կար: Այդպես տասնյակ ու տասնյակ դասախոսներ Գավառի պետական համալսարանի շնորհիվ, Հակոբյանի հորդորին ու պահանջին ականջալուր, նրա հայրական հոգածության ներքո դարձան գիտությունների դոկտորներ ու թեկնածուներ:

Ներուժի բացահայտումը մասնագիտական բառապաշարով ընդունված է անվանել «կադրերի պատրաստում»: Այս երկու հասկացություններն ունեն գրեթե նույն բովանդակությունը: Նա գիտության ու կրթության ոլորտում մասնագետների պատրաստումը համարում էր իր սուրբ պարտականությունը: Միաժամանակ իր առաքելությունն էր համարում մարդակերտումը և հայակերտումը: Կարծում ենք՝ սա է գաղտնիքը, որ Հակոբյանին իրենց ուսուցիչն են համարում ոչ միայն նրանք, որոնց հետ անմիջապես աշխատել է ու դասախոսել, այլ բոլոր նրանք, որոնց հետ պարզապես շփվել ու հաղորդակցվել է՝ մեծի հետ մեծ, փոքրի հետ՝ փոքր սկզբունքով: Եվ այս մեծ ու հզոր մարդը մեզ թողել է այնպիսի թանկ ժառանգություն, որ մեր՝ համալսարանականներիս պարտքն է խնամքով պահպանել այդ ժառանգությունը, քանզի մտավոր ոլորտի ժառանգությունը պահպանելուց զատ պետք է արժևորել ու հարստացնել և հանձնել հաջորդ սերունդներին: Սա է հակոբյանական պատգամը՝ դիմացինի մեջ տեսնել մարդուն և նրա մեջ բացահայտել կարողություններ ու ներուժ՝ հանուն անհատի և հանրային շահի, հանուն անձնային և սոցիալական զարգացման ու առաջընթացի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հակոբյան Հր., Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան, 2003:
2. Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ, Երևան, 2014:

3. Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975:
4. Ցվայգ Ստ., Մարդկության աստեղային ժամերը, Երևան, 1986:

THE PEERLESS MASTER, WHO REVEALS HUMAN POTENTIAL: HRANT KHACHATUR HAKOBYAN

GHAJOYAN HAMLET
PhD in Philosophy
Dean of the Faculty of Humanities, GSU
e-mail: h.ghajoyan@gsu.am

Human potential and his opportunities revealed by the Founder Rector of Gavar State University, Doctor of Philosophical Sciences, Professor - Hrant Hakobyan are examined in the article.

In particular, much attention was paid to identifying those abilities, which were more than demonstrated while forming the academic and administrative staff of Gavar State University. Moreover, one of his goals was to identify all the intellectual abilities among the region and to combine them with the above mentioned things.

The basis of the article is the book "Pages from the History of Gavar State University" written by him, as well as the impressions and memories we received during the years working with him. The author of these lines himself felt the efforts and care of Hrant Hakobyan for revealing the potential.

We came to the conclusion that in order to discover the potential of others, first of all, it is necessary to have a desire for it, and then be able to value the potential of a person not only from personal point of view, but also from a public point of view. He proceeded from the principle that personal potential and abilities are not only his property, but it is national wealth. In a short period of time, Hakobyan gathered around him a united group of devotees, who became the pillar for the establishment of the university.

Keywords: *mission, potential, ability, inspiration, providence.*

АКОБЯН ГРАНТ ХАЧАТУРОВИЧ - НЕПРЕВЗОЙДЁННЫЙ МАСТЕР, РАСКРЫВАЮЩИЙ ПОТЕНЦИАЛ ЛИЧНОСТИ

КАДЖОЯН ГАМЛЕТ
Кандидат философских наук
Декан факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: h.ghajoyan@gsu.am

В статье рассматривается раскрытый ректором-основателем Гаварского государственного университета, доктором философских наук, профессором Грантом Акобяном потенциал личности и его возможности. В особенности большое внимание

было уделено выявлению тех возможностей, которые проявились более чем при формировании профессорско-преподавательского и административно-управленческого состава Гаварского государственного университета. При этом одной из его целей было выявление всего интеллектуального капитала региона и его объединение с вышеуказазанным.

В основе статьи лежит авторский труд "Страницы из истории Гаварского государственного университета", а также впечатления, воспоминания, полученные нами за годы работы с ним. Сам автор этих строк чувствовал усилия и заботу Акобяна Гранта по раскрытию потенциала.

Мы пришли к выводу, что для того, чтобы раскрыть потенциал других, прежде всего, необходимо иметь к этому стремление, а затем уметь оценивать потенциал личности не только с сугубо личностной, но и также с общественной точки зрения. Он исходил из того принципа, что личностный потенциал и возможности - это не только собственность человека, это национальное достояние. За короткое время Акобян сплотил вокруг себя сплоченный коллектив преданных своему делу людей, которые стали опорой становления университета.

Ключевые слова: *миссия, потенциал, возможности, вдохновение, провидение.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.09.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 29.09.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: